

3527

ՕՍԿԱՐ ՈՒԱՅԼԴ

ԱՆՁՆՈՒԻՐ ԲԱՐԵԿԱՄԸ

Թարգմ. անգլերենից
ԿԱՐԼ ՄԻՐԱՇԵՒՄՆ

82

№-13

ՄՈՍԿՒԱ—1920

82
N-13

պր

28 JUN 2005
2 NOV 2009

ՕՍԿԱՐ ՈՒՍՅՈՂ

ԱՆՁՆՈՒԷՐ ԲԱՐԵԿԱՄԸ

1002
5666

Թարգմ. անգլերենից
ԿԱՐԷՆ ՄՆԱՅԵՐԻՆՆԱ



ՀՐԱՏԱՐԱԳՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԳԱԿԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՄԻՆԻՍՏ
ՄՈՍԿՎԱ — 1980

26.08.2013

2527

ԱՆՁՆՈՒՆԵՐ ԲԱՐԵԿԱՍԸ

Տպար. Կենտր. Հայկ. Կոմիտ. Մոսկվա, Արմենիայի փ., 2
 Типогр. Центральн. Армянск. Комис., Москва, Армянский пер., 2

ԱՆՁՆՈՒԷՐ ԲԱՐԵԿԱՄԸ

Մի առաւօտ պառաւ Չրամուկը գր-
լուխը հաննց բնիցը: Նա ունէր պոպը-
ղուն ուլունքէ աչքեր և գորշ ու կաշտ
բէխեր, իսկ պոչը՝ ինչպէս մի սև ու-
տինէ պարան: Լճի մէջ լողում էին բա-
ղիկները՝—նման դեզին զեղձանիկների
մի երամի,—ու մայրը,—ինքը՝ ողջ սպի-
տակ, իսկ թաթիկները՝ ալ-կարմիր—սո-
վորեցնում էր նրանց՝ ինչպէս զլիւիվայր
կանգնեն շրի մէջ:

— Մինչև որ զլիւի վրայ չկորողանաք
կանգնել, դուք երբէք լաւ հասարակու-
թեան մէջ մուտք չէք ունենայ, կրկնում
էր նա անդադար: Եւ, ժամանակ առ ժա-
մանակ, ցոյց էր տալիս, թէ ինչպէ՞ս պի-
տի անեն: Իսկ բարեկամները ուշք չէին
դարձնում նրա վրայ: Նրանք այնքան
շեռատի էին, որ չգիտէին, թէ, առ հա-

սարակ, հասարակութեան մէջ լինելը ի՞նչ առաւելութիւն ունի:

— Ես'տ անհնազանդ եմ, դոչեց պառաւ Զրամուկը:— Ուղղակի արժէ զրանց խեղդելը:

— Ո՛չ երբէք, պատասխանեց Բաղը. — Սկիզբն է միայն դժուար, և ծնողները չպիտի անհամբեր լինեն:

— Ա՛խ, խորթ եմ ինձ համար ծնողական զգացմունքները, ասաց Զրամուկը:— Ես ընտանեկէսէր չեմ: Իսկն աստժ, ես չեմ ամուսնացել և մտադրութիւն էլ չունիմ ամուսնանալու: Սէրն ինքն ըստ ինքեան լաւ բան է, սակայն բարեկամութիւնն աւելի բարձր է: Իսկապէս, աշխարհիս երեսին անձնուէր բարեկամութիւնից աւելի ազնիւ և աւելի հողազիւտ բան չկայ:

— Իսկ որո՞նք են, ասա՛ խնդրեմ, քո կարծիքով, անձնուէր բարեկամի պարտականութիւնները, հարցրեց մի Կանաչ Կանեփակեր, որ, նստած ձօտակայ Ուսկնու վրայ, լսել էր խօսակցութիւնը:

— Ես էլ կուղենայի իմանալ, ասաց Բաղը և լողաց դէպի լճի ծայրն ու դրլխի վրայ կանգնեց՝ իր երեխաներին ձերցոյց ապու համար:

— Ա՛յ լիմար հարց, բացականչեց Զրամուկը. — Իհարկէ, ես կուղենայի, որ իմ անձնուէր բարեկամը դէպի ինձ անձնուէր լինի:

— Իսկ ի՞նչ կանէիր դու զրա փոխարէնը, հարցրեց փոքրիկ Թաչնիկը արձաթ ճիւղի վրայ օրօրուելով ու իր փորիկ Թևերը Թափահարելով:

— Ես քեզ չե՛մ հասկանում, պատասխանեց Զրամուկը:

— Թո՛ղ տուէք այդ առիթով մի պատմութիւն անել, ասաց Կանեփակերը:

— Ի՛մ վրայ է այդ պատմութիւնը, հարցրեց Զրամուկը:— Եթէ այո՛, ապա կը լսեմ, որովհետեւ ես սաստիկ սիրում եմ առասպելներ:

— Կարող է և քե՛զ վերաբերել, ասաց Կանեփակերը: Եւ նա ցառակեց ու նստեց

ափին ու տրաւ «Անձնուէր Բարեկամի»
պատմութիւնը:

«— Հին ժամանակ, ասաց Կանեփա-
կերը,— կար չկար մի ազնիւ երիտասարդ
տղայ կար, անունը՝ Տանս:

— Յայտնի՞ ծարդ էր, հարցրեց Ջրա-
մուկը:

— Ո՛չ, պատասխանեց Կանեփակերը,
— չեմ կարծում որ նա առհասարակ յայտ-
նի լինէր, եթէ չհաշուենք նրա բարի սիր-
տըն ու ծիծաղաշարժ, պարզամիտ կըր
դէմքը: Ազրում էր նա մի փոքրիկ խր-
ճիթում, մեն-մինակ, ու օրն ի բուն աշ-
խատում իր պարտիզում: Ողջ շրջակայ-
քում նրա պարտիզի պէս սիրուն Պար-
տէզ չկար: Անուշ Մեխակն էր բանում
այնտեղ, և՛ Շահպարակը, և՛ Նովուի Պար-
կը, և՛ Փրանսիական Ջընաղ Կոյսը: Այն-
տեղ էր՝ ալ Վարդն ու դեղին Վարդը,
մանուշակագոյն Ջաֆրանն ու դրա ոս-
կեգոյնը, ծիրանի Մանուշակն ու դրա
սպիտակը: Զանգակ ծաղիկն ու Դաշտի
Կոտեմը, Սուսամբարն ու վայրի Ռէհանը,

Կովացնժուէն ու Լալազարը՝ Ոսկեծաղի-
կըն ու Կարմիր Մեխակը բացուել էին ու
ծաղիկէ՛լ հերթով, ամիս առ ամիս, ու մի
ծաղիկը տեղի էր տալիս միւսին, այնպէս
որ այդտեղ տեսողութեան համար միշտ
դեղեցիկ բան կար և հոտոտելիքի հա-
մար՝ ախորժ բուրմունք:

— Փոքրիկ Տանսը շատ բարեկամներ
ուներ, սակայն դրանից ամենամեծնուէրը՝
հաստափոր Ջաղացպանը՝ չիւզօն էր: Իս-
կապէս, հարուստ Ջաղացպանը դէպի
փոքրիկ Տանսը այնքա՛ն անձնուէր էր,
որ երբէք չէր անցնի նրա պարտիզի մօ-
տով, մինչև որ չհաանար պատի վրայից
ու չկարէր մի մեծ փուռնչ, կամ մի բուռ
անուշահոտ խոտ և կամ չլցնէր զրպա-
նը սալորով ու բալով, եթէ պտղի ժա-
մանակ էր:

— Իսկական բարեկամների համար ա-
մեն ինչ պիտի ընդհանուր լինի, ասում
էր Ջաղացպանը, և փոքրիկ Տանսը զըլ-
խով համաձայնութեան նշան էր անում
ու ժպտում, և հպարտանում էր, որ

այլպիսի ազնիւ հայեացքների տէր բարեկամ ունի:

— Երբեմն, իսկ է, հարեանները տարօրինակ էին համարում, որ հարուստ Ջաղացպանը փոքրիկ ճանսին փոխարէնը երբէք չի՛ հատուցանում, թէև շաղալուծը հարիւր տուրակով ալիւր ունէր ու վեց կլթան կով ու բրգոտ ոչխարների մի մեծ հօտ: Սակայն ճանսի մտքովը զրանք չէին անցնում, և ոչ մի բան այնպիսի հաճոյք չէր պատճառում նրան, քան այն հրաշալի խօսքերը, որ ասում էր Ջաղացպանը իսկական բարեկամների անձնագրհուլթեան մասին:

Ու այսպէս, փոքրիկ ճանսը աշխատում էր իր պարտիզում: Գարնան, ամառուան ու աշնան ընթացքում նա շատ երջանիկ էր լինում, բայց երբ ձմեռն էր գալիս, նա ոչ մի բան էր ունենում և ոչ էլ ծաղիկ՝ շուկան տանելու, նա սկսում էր տառապել յրտից ու քաղցից ու յաճախ անկողին էր մտնում առանց ընթրիքի, եթէ չհաշուենք մի քանի հատ

տանձաւորն ու մի բուռ կարծր ընկոյզը: Ու այսպէս, ձմեռը նա բոլորովին մենակ էր մնում, որովհետև Ջաղացպանը երբէք նրան այցի չէր գալիս:

— Ինձ չի՛ սազի փոքրիկ ճանսին այցի գնալ, քանի դեռ ձիւն կայ, ասում էր Ջաղացպանն իր կնոջ, — որովհետև, երբ մարդս վատ է ապրում, պիտի նրան մենակ թողնես, ու այցելուները նրան չպիտի անհանգստացնեն: Սլո է, յամենայն դէպս, իմ կարծիքը բարեկամութեան մասին, և ես համոզուած եմ, որ ճիշտ եմ: Ու հսպասեմ ես, մինչև դարունը դայ, ու այն ժամանակ ես նրան այցի կգնամ, և նա հնարաւորութիւն կունենայ ինձ մի մեծ կողով վարդ տալու, և զրանից նա այնքա՛ն երջանիկ կլինի:

Դու, իսկապէս, գէպի ուրիշները շատ հողատարն ես, պատասխանեց կինը՝ նստելով իր յարմար բազկաթոռի վրայ, շօճու փայտի վառ կրակի առաջ, — Եւ մարի՛տ, անչափ հագատար: Ուղղակի մի

հանոյք է լսել քո դատողութիւնը բարեկամութեան մասին: Հաւատացած եմ, որ նոյնիսկ քահանան չի կարող այնքան զեղեցիկ խօսել, ինչպէս դու, թէ և նա ապրում է փառաւոր կերպով երեք չարկանի տան մէջ և ճկոյթ մատին ոսկէ մատանի է դնում:

— Իսկ չի՞ կարելի փոքրիկ հանսին մեզ մօտ կանչել, ասաց Ջաղացպանի կրտսեր որդին:— Քանի որ խեղճ հանսը վատ է ապրում, ես կուզենայի նրան ապ իմ ապուրի կէսը և ցոյց տալ իմ ազիտակ ճաղարները:

— Ի՞նչ լիմար տղայ ես, բացահանչեց Ջաղացպանը:— Չգիտեմ, իսկապէս, ի՞նչ օղուտ ունի քո դպրոց գնալը: Երեւում է, դու ոչինչ չես սովորի: Չէ՞ որ, եթէ փոքրիկ հանսը դայ այստեղ ու տեսնի մեր վառ կրակը և մեր ճօխը ընթրիքն ու մեր կարմիր զինու մեծ տակառը, նա կնախանձի. իսկ նախանձը՝ սոսկալի բան է ու ամենքի բնաւորութիւնը փչացնում է: Ես, իսկապէս,

թոյլ չեմ ապ, որ հանսի բնաւորութիւնը փչանայ: Ես նրա ամենալաւ բարեկամն եմ ու միշտ պիտի հսկեմ, որ նա դալթաղութեան մէջ չընկնի: Բացի այդ, եթէ հանսը դալու լինի, կարող է ինձնից խնդրել, որ ալիւք փոխ տամ, իսկ այդ ես չեմ անի: Այլ բան է ալիւքը, այլ՝ բարեկամութիւնը, և այդ երկուքը չի կարելի միմիանց հետ շփոթել՝ մանաւանդ, որ այդ բառերը տարբեր արտասանութիւն ունին և միանգամայն տարբեր իմաստ: Ամենքի համար էլ այդ պարզ է:

— Ի՞նչ լաւ ես խօսում, ասաց Ջաղացպանի կինը՝ լցնելով իր համար մի մեծ գաւաթ տաք էլլ*):— Ուղղակի իմ քունը տարաւ: Կարծես թէ եկեղեցում լինեմ:

— Գործով շատե՛րն են լաւ, պատասխանեց Ջաղացպանը, — իսկ խօսքով քչերը, ուրեմն խօսքը գործից աւելի դժուար է, հետեապէս, և ուելի՛ կարեօր.

*) էլլ՝ գարեջրի տեսակ է:

— Եւ նա, խստագէտ, սեղանի վրայից նայեց իր փոքր որդուն, որն այնքան տմաչեց ինքն իրեն, որ զլուխը խոնարհեց ու կարմրեց և սկսեց լալ՝ արտասուքը կաթեցնելով թէյի մէջ: Սակայն, նա շատ շտհել էր, և դուք պիտի ներէք նրան:

— Իա պատմութեան վե՛րջն է, հարցրեց Զրամուկը:

— Ո՛չ, իհարկէ, պատասխանեց հանեփակերը.— միայն սկիզբը:

— Ուրեմն դու ժամանակից բաւականին լեա եօ մնացել, ասաց Զրամուկը: — Ամեն մի պատմիչ, մեր օրերին, իր պատմութիւնը սկսում է վերջից, ապա առաջ է դնում դէպի սկիզբն ու վերջացնում միջին մասով: Իա է նորագոյն մեթոդը: Այս ամէնը, անցած օրը, ես լսեցի մի քննադատից, որ մի երիտասարդ պարոնի հետ զրօսնում էր լճի շուրջը: Այդ առիթով նա երկար խօսեց, և ես համոզուած եմ, որ նա իբաւացի է, որովհետեւ նա կապուտ ակնոցով էր ու ճաղատ պիտով, և, ամեն անգամ, երբ ե-

րիտասարդը մի որևէ նկատողութիւն էր անում՝ նա անմիջապէս պատասխանում էր՝ «Թ՛ուհի»: Սակայն, խնդրեմ, շարունակի՛ր պատմութիւնդ: Զաղացպանը իմ դուրն է դալիս շատ: Եօ կապուած եմ նրա հետ լաւագոյն զգացմունքներովս, ու մենք միմիանց սաստիկ համակրում ենք:

— Հա՛, ասաց Կանեփակերը ոստոսուելով մերթ ոյս, մերթ այն ոստի վրայ: — Տէնց որ ձմեռն անցաւ ու զարնան ծաղիկները բաց արին իրենց բաց դեղնադոյն աստղերը՝ Զաղացպանն ասաց կնոջը, որ պիտի գնայ ու այցելի փոքրիկ ճանսին:

— Պա՛հ, ի՛նչ բարեսիրան եօ, բացականչեց կինը.— Ի՛նչ միշտ ուրիշներին մասին եօ մտածում: Բայց չմոռանա՛մե՛ծ կողովը հետդ տանել ծաղիկների համար:

Ու Զաղացպանը երկաթէ ամուր շրջթալով կապեց քամու շաղաքի առագաստըն ու իշաւ բլրից՝ կողովը ձեռին:

— Բարի լո՛յս, փոքրի՛կ ճանս, ասաց Զաղացպանը:

— Բարի լո՛յս, պատասխանեց չանսը՝ հենուելով բահին ու լիտրերան ժպտալով։
— Տը՛, ինչպէ՛ս անց կացրիր ձմեռս, ասաց Ջաղացպանը։

— Լա՛ւ, բացականչեց չանսը.— Իսկապէս դուք ինձ մեծ լաւութիւն էք անում այդ հարցով, ճշմարիտ, մեծ լաւութիւն։ Ուղիղն ասած, աւելի շուտ, վա՛ս անց կացրի, սակայն այժմ դարունը բացուել է, և ես ուղղակի երջանիկ եմ, և իմ ծաղիկներն էլ լաւ են։

— Ձմեռս քո մասին յանախ էինք խօսում, ասաց Ջաղացպանը.— և զարմանում էինք, թէ ինչպէ՛ս ես ապրում։

— Դուք շատ բարի էք, ասաց չանսը.— այն ինչ ես վախենում էի, թէ մի գուցէ մոռացել էք ինձ։

— Չա՛նս, ես զարմանում եմ քեզ վրայ, ասաց Ջաղացպանը.— Բարեկամութիւնք երբէք չի՛ մոռացւում։ Դա նրա լաւագոյն կողմն է, սակայն վախենում եմ, որ դու չհասկանաս կեանքի բանա-

ստեղծութիւնը։ Իմիշի այլոց, ի՛նչ լաւ գարնան ծաղիկներ ունիս։

— Իսկապէս գեղեցիկ են շատ, ասաց չանսը.— Ու մեծ բաղդաւորութիւն է ինձ համար, որ այդքան շատ են։ Ուզում եմ շուկայ տանել ու ծախել Բաղաքազլիի աղջկան ու այդ փողով չեա գնել իմ ձեռի սալլակը։

— Յետ գնել սալլակը։ Ուզում ես ասել, որ գրա՛ւ էիր դրեր։ Ի՛նչ լիմար բան ես արել։

— Չա՛, բանն այն է, ասաց չանսը, որ ես ստիպուած էի։ Ինչպէս տեսաք, ձրմեռը շատ նեղ անցաւ ինձ համար, և ես, իսկապէս, քոն հոպէկ չունէի, որ հացի տալի։ Առաջ գրաւ դրի Կիրակի օրուայ բանկոնիս արծաթէ կոնահները, չեաոյ դրաւ դրի արծաթէ շղթաս, յետոյ՝ մեծ ծխաքարչս և վերջապէս՝ ձեռի սալլակս։ Բայց, հիմա, ուզում եմ չեա գնել։

— Չա՛նս, ասաց Ջաղացպանը.— Ես իմ սալլակը քեզ կտամ. թէե ամբասն էլ սարքին չէ՛ կողերից մէկը չկայ ու անի-

9995



ւի շառաւիղներն էլ տեղը չեն, բայց, չընայած դրան, քեզ եմ տալիս: Գիտե՞մ դա մեծահոգութիւն է իմ կողմից ու շատերն ինձ չիմար կհամարեն, որ բաժանուում եմ իմ սալակից, բայց ես ուրիշների նրման չեմ: Ես համարում եմ, որ մեծահոգութիւնը բարեկամութեան հիմքն է, մանաւանդ, որ ինձ համար նոր սալակ եմ դնել: Այո՛, կարող ես բոլորովին միամիտ մնալ, որ սալակս քեզ կտամ:

— Այ՛ն, իսկապէ՞ս դա մեծահոգութիւն է ձեր կողմից, ասաց փոքրիկ ճանսր, ու նրա ծիծաղաշարժ կլոր դեմքը հրճուանքից փայլեց:— Ես հեշտ կերպով կնորոգեմ սալակը, որովհետեւ ասնր տախտակ ունիմ:

— Տախտակ, ասաց Ջաղացապանը:— պահ, դա հէնց այն է, ինչ ես որոնում էի շտեմարանիս տանիքի համար: Այնտեղ մի մեծ ճեղք կայ, եթէ չկարկատեմ՝ հացահատիկներս բոլորովին կկտրուեն: Ի՞նչ լաւ, որ չիշեցրիր: Ուշադրութեան արժանի բան է, թէ ինչպէս

մի բարի գործ ծնում է մի ուրիշը: Ես առւի քեզ իմ սալակը, իսկ դու, այժմ, տալիս ես քո տախտակը: Անշուշտ, սալակն աւելի թանկ է, քան տախտակը, սակայն ճշմարիտ բարեկամները այդպիսի բաների վրայ ուշադրութիւն չեն դարձնում: Խոչըրեմ, իսկոյն դնա՛, բե՛ր, և ես, այսօր և ետ, իմ ամբարում գործի կկաչեմ:

— Իսկոյն, բացականչեց փոքրիկ ճանսր և դէպի սարայր վազեց ու դուրս հանեց տախտակը:

— Այնքան էլ մեծը չէ, ասաց Ջաղացապանը գննելով տախտակը:— և վախենում եմ, որ շտեմարանիս տանիքը կարկատելուց յետոյ, տակը բան չմնայ, որ սալակդ նորոգես. սակայն դա իմ մեղք չէ, իհարկէ: Իսկ այժմ, քանի որ քեզ առւի իմ սալակը, հաւատացած եմ, որ դու ուրախութեամբ փոխարէնն ինձ կրտալիր մի քիչ ծաղիկ: Ահա՛ կսպորը, միայն, աե՛ս, լիքը լինի:

— Լիքը լինի, ասաց փոքրիկ ճանսր

մի առանձին վշտով, որովհետև կողովն իսկապէս շատ մեծ էր, ու նա տեսաւ, որ եթէ լցնէր, շուկայի համար այլևս ծաղիկ չէր մնայ, իսկ նա սաստիկ ուզում էր արծաթէ կոճակները յետ գնել:

— Իսկն ասած, պատասխանեց Ջաղացպանը. — քանի որ սալակս քեզ տուի՝ մտածեցի, որ մեծ բան չէ, եթէ քեզանից մի քիչ ծաղիկ խնդրեմ: Գուցէ ես սխալուեմ եմ, բայց իմ կարծիքով բարեկամութիւնը, այո՛, իսկական բարեկամութիւնը, որեւէ հասմոյութիւնից զերծ է եղեր:

— Սիրելի՛ բարեկամս, իմ ամենալա՛ւ բարեկամս, բացականչեց փոքրիկ ճանսը. — պարտիզիս բոլոր ծաղիկների տէրն ես. յամենայն զէպս քո կարծիքն ինձ համար աւելի զին ունի, քան իմ արծաթէ կոճակները: — Ու վազեց նա, ու քաղեց իր բոլոր սքանչելի գարնան ծաղիկներն ու լցրեց Ջաղացպանի կողովը:

— Յտեսութի՛ւն, փոքրի՛կ ճանս, ասաց Ջաղացպանը բարձրանալով զէպի

բլուրը՝ տախտակն ուսին ու մեծ կողովք կռանք:

— Յտեսութի՛ւն, ասաց փոքրիկ ճանսըն ու սկսեց, ուրախ-ուրախ, բրել հողը՝ նա այնքա՛ն բաւական էր սալակիցը:

Հետեւեալ օրը նա իր գաւիթի վրայ այժեթփիկ էր մեխում, երբ լսեց Ջաղացպանի ձայնը, որ հանչում էր ճանապարհից: Նա ցած իջաւ սանդուխքից, վազեց զէպի պարտեզն ու պատի վրայից նայեց:

— Ջաղացպանն էր՝ ալիւրի մի մեծ տուպրակ մէջքին:

— Սիրելի փոքրիկ ճանս, ասաց Ջաղացպանը. — նեղութիւն չլինի՛ այս ալիւրի տուպրակն ինձ համար տա՛ր շուկան:

— Ա՛խ, շա՛տ ափսոս, ասաց ճանսը. — բայց ես, իսկապէ՛ս, այսօր զբաղուած եմ: Ես պիտի իմ բոլոր պատաստուկները մեխեմ, բոլոր ծաղիկներս շրեմ և նրանց քաղը հանեմ:

— Ուրեմն այդպէ՛ս, ասաց Ջաղացպանը: — Կարծում եմ, քանի որ քեզ եմ

տալիս իմ սալլակը՝ քո կողմից տմար-
դութիւն կլինի խնդիրս մերժել:

—Օհ, դա՞ ինչ խօսք է, բացականչեց
փոքրիկ ճանար:—Կեանքումս երբէք չէի
ուզիլ տմարդի լինել:—Ու ներս վազեց
գլխարկի հետեւից, ու մեծ տոպրակն ու-
սին գնաց դէպի շուկան:

—Մի սոսկալի տօթ օր էր, ճանա-
պարհը՝ սաստիկ փոշոտ, և ճանար, վեց-
երորդ վերստասիւնին դեռ չհասած՝ այն-
պէ՛ս չոգնեց, որ ստիպուած էր նստել ու
հանդստանալ: Բայց և այնպէս նա քաջի
պէս գնում էր, և, վերջապէս, հասաւ
շուկան: Մի առ ժամանակից յետոյ, բա-
ւականին լաւ գնով, ծախեց ալիւրի
տոպրակն ու խկոյն վերադարձաւ դէպի
տուն, որովհետեւ վախենում էր, որ, եթէ
ուշանար, կարող էր ճանապարհին աւա-
ղակների հանդիպել:

—Ի՞նչ ծանր օր էր, ասաց փոքրիկ
ճանսն ինքն իրեն, երբ անկողինը մտաւ.
—բայց ես ուրախ եմ, որ Զաղացպանի
խօսքը չկատրեցի, որորհետեւ նա իմ ա-

մենալաւ բարեկամն է, ու, բացի այդ, իր
սալլակն ուղում է տալ ինձ:

Նետեկալ առաւօտը՝ կանուխ, Զաղաց-
պանը եկաւ ալիւրի փողը ստանալու,
բայց ճանար շատ յոգնած լինելուց՝ դեռ
անկողնումն էր,

—Աղնի՛ւ խօսք, ասաց Զաղացպանը.
—դու շատ ծոյլ աղայ ես: Իսկապէս,
քանի որ սալլակս քեզ եմ տալիս, կար-
ծեցի, թէ դու աւելի կատնդով պիտի
աշխատէիր: Պարբազ մնալը մեծ ծեղք է,
և ես, իհարկէ, չեմ սիրում, երբ իմ բա-
րեկամներից որեւէ մէկը պարբազ կամ
ծոյլ է լինում: Զնեղանաս, որ քեզ հետ
խօսում եմ բաւականին անկեղծ: Իհարկէ
այս խօսքերը մտքովս չէին անցնի, եթէ
քո բարեկամը չլինէի: Ել ի՞նչ օրւայ հա-
մար է բարեկամութեան լաւութիւնը,
եթէ չես կարող շիտակօրէն ասել այն,
ինչ մտածում ես: Նանոյախօսել, դուր
գալ ու շողքօրթել՝ կարող է ամեն
մարդ, իսկ ճշմարիտ բարեկամը միշտ
անդուր է խօսում և ցաւ պատճառե-

լուց չի՛ վախենում: Յիրաւի, իօկական բարեկամը գերադասելի է համարում այդ, որովհետեւ զիտէ, որ գրանով նա լաւութիւն է անում:

— Ափսոս, շա՛տ ափսոս, ասաց փոքրիկ ճանսը՝ աչքերը տրորելով ու զիշերուայ գդակն հանելով:— Բայց ես այնպէս էի յոգնել, որ ուղեցի մի փոքր պառկել անկողնումս ու լսել թռչունների երգը: Գիտէ՞ք դուք, որ, ամեն անգամ, թռչունների երգը լսելուց լետույ, ես աւելի լաւ եմ աշխատում:

— Որ այդպէս է՛ շատ ուրախ եմ, ասաց Ջաղացպանը ձեռք զարկելով փոքրիկ ճանսի մէջքին:— որովհետեւ ես ուզում էի, որ դու, հազնուելուդ պէս, չաղացս դայիր ու շինէիր շտեմարանիս տանիքը:

Խեղճ ճանսը շատ էր ուզում իր պարտեզը գնալ ու աշխատել, որովհետեւ ծաղիկներն, ահա երկու օր էր, չէին չըուել, բայց չէր ուզում Ջաղացպանին մերժել, քանի որ իր լու բարեկամն էր:

— Ծեր կարծիքով տմարդութիւն կլինէր իմ կողմից, եթէ ասեի, որ զբաղուած եմ, հարցրեց նա երկչոտ ու ամօթխած ձայնով:

— Իհարկէ, այո՛, պատասխանեց Ջաղացպանը:— կարծեմ մի մեծ բան չեմ խնդրում քեզանից, մանաւանդ, որ ուզում եմ քեզ տալ իմ սայլակը: Սակայն, իհարկէ, եթէ մերժես խնդիրս՝ կգնամ և ինքս կանեմ:

— Օ՛հ, ո՛չ երբէք, բացականչեց փոքրիկ ճանսը: Ու ցատկեց անկողնուցը, հագաւ շորերն ու դնաց զէպի շտեմարանը: Նա ողջ օրը՝ մինչև տրեւի մայր մըտնելը, աշխատեց, և արեւի մայր մտնելու ժամանակ եկաւ Ջաղացպանը՝ տեսնելու, թէ ինչ է արել:

— Ի՞նչ, մի՞թէ արդէն ծածկել ես տանիքի ճեղքը, փոքրիկ ճանս, բացականչեց Ջաղացպանն ուրախ ձայնով:

— Արդէ՛ն, պատասխանեց փոքրիկ ճանսը՝ իջնելով սանդուխքից:

— Ա՛հ, ասաց Ջաղացպանը:— չկայ ա-

ւելի քաղցր աշխատանք, քան այն, որ անուժ եւ ուրիշի համար:

— Իսկապէս մեծ շնորհ է ինձ համար, որ ձեզ լսում եմ, պատասխանեց փոքրիկ ճանսը՝ նստելով ու ճակատը սրբելով.— շատ մեծ շնորհ Բայց ես վախենում եմ, որ երբէք չպիտի ունենամ այնպիսի գեղեցիկ գաղափարներ, ինչպէս ձերն է:

— Օհ, այդ էլ կուեննաս, ասաց Ջաղացպանը.— միայն դու պիտի աւելի՛ աշխատես: Սչժմ դու ունիս բարեկամութեան ձրայն գործնական կողմը, երբ և իցէ դու տէր կլինես նաև տեսական կողմին:

— Իսկապէս կարծում էք, որ կլինե՞մ, հարցրեց փոքրիկ ճանսը:

— Երբէք չեմ կասկածել, պատասխանեց Ջաղացպանը.— իսկ այժմ, քանի որ շինել ես իմ տանիքը, աւելի լաւ կանես՝ դնաս տուն ու հանգստանաս, որովհետև վաղն ուղում եմ ոչխարներս քեզ տալ, որ սաքը տանես:

Խեղճ ճանսը վախեցաւ որևէ բան ա-

ռարկել, ու, միւս օրը, Ջաղացպանն իր ոչխարները քչեց նրա խրճիթի առաջը. և ճանսը նրանց կեա ճանապարհ ընկաւ դէպի սարը: Նա ողջ օրը կորցրեց սարը գնալու և գալու վրայ, ու երբ վերադարձաւ՝ նա այնքա՛ն էր չօգնել, որ անմիջապէս քնեց իր աթոռի վրայ ու մինչև լոյս չկարողացաւ արթնանալ:

— Ի՛նչ լաւ պիտի անց կացնեմ ժամանակս այսօր իմ պարտիզում, ասաց նա ու անմիջապէս դնաց աշխատանքի: Բայց նա նորից չկարողացաւ զրուգուել իր ծաղիկներով, որովհետև նրա բարեկամը, Ջաղացպանը, ամեն անգամ, զալիս ու նրան զանազան յանձնարարութիւններով հեռու տեղեր էր ուղարկում կամ իրեն օգնելու համար շաղացր տանում: Փոքրիկ ճանսը, երբեմն, սաստիկ վիատուում էր, որովհետև վախենում էր ծաղիկները մտածեն, թէ՛ նա նրանց մոռացել է, բայց այն միտքը, որ Ջաղացպանն իր ամենալաւ բարեկամն է՝ մխիթարում էր նրան:

— Բացի այդ, ասում էր նա.— Ձաղացապանն ինձ է ուզում տալ իր սալլակը, իսկ դա կատարեալ վեհանձնութիւն է նրա կողմից:

Ու այդպէս փոքրիկ ճանսը, օրն ի բուն, աշխատում էր Ձաղացապանի համար, իսկ Ձաղացապանը գանձոցան հրաշալիքներ էր պատմում բարեկամութեան մասին, ու ճանսը գրի էր առնում իր նկատողութեան տեարում և զիշերները սերտում, որովհետև նա շատ լաւ աշակերտ էր:

Մի անգամ, երեկոյեան, փոքրիկ ճանսը նստել էր իր օջախի առաջ, երբ մէկը բաղխեց դուռը: Մի դաժան զիշեր էր, և քամին այնպիսի կատաղութեամբ էր փչում ու ոռնում սան շուրջը, որ նրան թուաց, թէ դա դուռը չէր, այլ լոկ փոթորիկը: Բայց, ահա՛, լսուեց երկրորդ հարուածը, ապա՝ երրորդը՝ աւելի ուժգին, քան առաջին երկուսը:

— Երևի մի որևէ անձար ուղևոր է, ասաց փոքրիկ ճանսն ինքն իրեն՝ վազելով դէպի դուռը:

Այնտեղ կանգնած էր Ձաղացապանը՝ մի ձեռին լապտեր, միւսին՝ մի հաստ փայտ:

— Միրելի՛ փոքրիկ ճանս, կանչեց Ձաղացապանը.— մի մեծ գժբաղդութիւն է պատահել ինձ: Փոքրիկ տղաս վայր է ընկել սանդուխքից ու վնասուել, ու ես գնում եմ բժշկի հետևից: Իսկ նա այնքան հեռու է ապրում, և զիշերն էլ այնքան վատ է, որ իզուր չլիշեցի, թէ աւելի լաւ կլինի, եթէ իմ տեղ դու գրնաս: Ինչ գիտես, որ իմ սալլակը քեզ եմ տալու, այնպէս որ արդարութեան դէմ չի լինի, եթէ դու փոխարէնը մի որևէ բան անկիր ինձ համար:

— Անշուշտ, բացահանչեց փոքրիկ ճանսը.— Ձեր ինձ մօտ դալք ես ուզողի մի շնորհ եմ համարում, ու ես անմիջապէս կգնամ: Բայց դուք պիտի շքնորհէք ինձ ձեր լապտերը, որովհետև այնքան մութ է զիշերը, որ, վախենում եմ, դար ու փոսի մէջ ընկնեմ:

— Ափսո՛ս, շա՛տ ափսոս, պատասխանեց Ձաղացապանը.— բայց սա իմ նոր

լապտերն է, ու մեծ զրկանք կլինի ինձ համար, եթէ հետը մի բան պատահի:

— Իէհ, ի՞նչ արած, առանց լապտերի կզնամ, պատառխանեց փոքրիկ ճանսը, ու հագաւ իր մեծ մուշտակն ու կարմիր տաք զգակը, ու վիզը մի շարժ կապեց և հանապարհ բնկաւ:

Ի՞նչ կատաղի փոթորիկ էր: Գիշերն այնքան մութ էր, որ փոքրիկ ճանսը հազիւ հազ էր տեսնում, ու քամին՝ այնքան ուժգին, որ նա գժուարութեամբ էր կարողանում ոտքի վրայ կանգնել: Իսկ նա, անվեհեր, մօտ երէք ժամ քայլելուց յետոյ, հասաւ բժշկի տունը և բազխեց դուռը:

— Այդ ո՞վ է, կանչեց բժիշկը՝ հանելով գլուխը ննջարանի պատուհանիցը:

— Փոքրիկ ճանսը, բժիշկ:

— Ի՞նչ ես ուզում, փոքրիկ ճանս:

— Ձաղացպանի տղան վայր է բնկել սանդուխքից ու վնասուելը, ու Ձաղացպանը խնդրում է, որ իսկոյն գաք:

— Շա՛տ լաւ, ասաց բժիշկն ու պատ-

ուիրեց, որ բերեն իր ձին, մեծ կօշիկները, լապտերը, և սանդուխքից իջաւ ու ձին բշեց ուղիղ Ձաղացպանի տունը, թողնելով փոքրիկ ճանսին հետևիցը վազելիս:

Մինչ դեռ փոթորիկն աւելի ու աւելի էր սաստկանում, ու անձրեք թափւում՝ հեղեղի նման, ու փոքրիկ ճանսը չէր կարողանում տեսնել, թէ ո՞ւր է զրնում ու յետ կը մնում ձիուցը: Յետոյ կորցրեց ուզին ու բնկաւ հանիճը, որ շատ վտանգաւոր տեղ էր, որովհետեւ լիքն էր խորը փոսերով, և այդտեղ խեղճ փոքրիկ ճանսը խեղդուեց: Նետուեալ օրն այժապանները գտան նրա դիակը մի ջրով լիքը փոսի մէջ օրօրուելիս ու բերան խրճիթը:

Բոլորը ներկայ էին փոքրիկ ճանսի թաղմանը, որովհետեւ նա յայանի էր ժողովրդին, իսկ Ձաղացպանը զլիսաւոր սրբաւորն էր:

— Քանի որ ես էի նրա ամենալաւ բարեկամը, ասում էր Ձաղացպանը:—

ուստի հարկը պահանջում է, որ ամենալաւ տեղն էլ իմը լինի:

Ու նա քայլում էր սզերթի առաջն ընկած երկայն սև թիկնօցով, ու, ժամանակ առ ժամանակ, մի մեծ թաշկիւնակով սրբում էր աչքերը:

— Փոքրէ չանսն անկասկած բոլորի համար էլ մեծ կորուստ է, ասաց Դարբինը, երբ թաղումն արին վերջացան ու փափուկ կերպով նստեցին պանդոկում՝ խմելու համեմած զինի ու քաղցր կէքս ուտելով:

— Մեծ կորուստ է, յամենայն դէպս, ի՛նձ համար, պատասխանեց Ջաղացպանը. — որովհետեւ ես, համարեա՛ թէ, նրան էի տուել իմ սայլակը, իսկ այժմ ես ուղղակի չզիտեմ, թէ ի՛նչ պիտի անեմ: Տանս մէջ նա ինձ խանդարում է և այնպիսի խայտառակ դրութեան մէջ է, որ եթէ ծախելու լինեմ՝ միևնոյն է ոչինչ չեն տալ: Այսուհետ, իսկապէս, ես շատ բզդոյշ պիտի լինեմ ուրիշին նուէր տալու:

ժամանակ: Իր վեհանձնութեան համար մարգո միշտ տուժում է:

— Հա՛, ասաց Ջրամուկը երկտը բնդ միջումից լետոյ:

— Հա՛, վերջացաւ, ասաց Կանեփակերը:

— Իսկ ի՛նչ եղաւ Ջաղացպանը, հարցրեց Ջրամուկը:

— Ո՛հ, ես իսկապէս չզիտեմ, աւելացրեց Կանեփակերը. — և իսկն ասած, իմ ի՛նչ դարձն է:

— Իսկոյն երևում է, որ բո բնաւորութեան մէջ կարեկցութեան գիծ չկայ, ասաց Ջրամուկը:

— Վախենում եմ, որ դու չնկատեօ պատմութեանս բարոյական իմաստը, ասաց Կանեփակերը:

— Ի՛նչը:

— Բարոյական իմաստը:

— Ուղում ես ասել, որ այս պատմութիւնը բարոյական իմաստ ունի:

— Անշուշտ, ասաց Կանեփակերը:

— Իսկապէս, ասաց Ջրամուկը սաստիկ զայրացած. — իմ կարծիքով այդ պի-

տի ասէիր նախ քան պատմութիւնը
 եթէ ասէիր, ես, իհարկէ, քեզ չէի լսի:
 Իսկն ասած, ես, այն քննադատի պէս,
 կասէի «Թ՛ուհ»:
 Թէև հիմա էլ կարող
 եմ ասելը—Ու նա իր ձայնի ամբողջ
 ուժովը գոռաց՝ «Թ՛ուհ», պոչը շարժեց
 ու բունը մտաւ:

— Իսկ ի՞նչպէս դուր եկաւ քեզ Ջր-
 բանուկը, հարցրեց Բազը, մի քանի բո-
 պէից լեռոյ լողալով դէպի նա:—Նա
 բաւականին լաւ կողմեր ունի, իսկ ինչ
 ինձ է վերաբերում, ես ունիմ մայրական
 դուլթ, և հէնց որ պառաւ աղջիկ եմ
 տեսնում, աչքերս լցնում են արտա-
 սուքներով:

— Վախենում եմ՝ չլինի թէ վշաա-
 ցրի նրան, պատասխանեց Վանեփակերը:
 — Բանն այն է, որ ես արի բարոյական
 իմաստով պատմութիւն:

— Մի, դա միշտ էլ շա՛տ վտան-
 գաւոր է, ասաց Բազը:

Ու ես միանգամայն կամաձայն եմ հետը:



«Ազգային գրադարան»



NL0169815

Գրեց Է՝ 10 րոպ.

Տպագր.՝ Կենտր. Հաշվ. Կոմիտ. Գրասենյակ, Արմավիրի վ., 2
Տիպոգր. Կենտրալի. Արմյանսկ. Կոմիտ., Մոսկվա, Արմյանսկի փ., 2